

պատմեց թէ ինչպէ՛ս Դերենիկ Արծրունին Յոգեաց վանահօր ձեռոք կտակ մը ստորագրել տուեր էր Մուշեղի՝ նորա տկարամտութենէն եւ զառամութենէն օգուտ քաղելով. պատմեց այդ անյագ Արծրունեաց՝ Ռշտունեաց տիրանալը, որ քու ազնիւ սիրտդ կը փափագի մոռնալ, բայց այդ կինը, որ երկրին կորուստը կարամարիէր՝ Գուրգէն կորուսելուն չէր կրնար ներել, վասնզի յիշատակին միայն շրթունքը կը դողային եւ աչքերը հուր կը փայլատակէին: «Չորս տարի է,— ըսաւ,— որ ես գիտես թէ այս երկիրը կառավարեցի Մուշեղի անուամբ. ապստամբ, խռովարար, բանսարկու, խստութեամբ սանձահարեցի, եւ ոչ ոք չի համարձակիր խլրտելու, բայց հիմա կը տեսնեմ թէ Դերենիկ մը մեշտեղ կելնէ՝ Տէր Արծրունեաց՝ եւ շնորհիւ Գուրգէնի փեսայ իշխանաց իշխանին, եւ կը զգամ թէ ամեն հնարք, խաբէութիւն, կաշառք եւ զինու բռնութիւն ի գործ պիտի դնէ այս տկար եւ թշուառ ժառանգը դրկելու համար: Ի՛նչ խորհուրդ կ'ուտաս ինձ դու, որ սիրտ եւ գլուխ ունիս»: Ես իրեն ըսի թէ ժամավաճառ պէտք չէ լինի, այլ շուտ մը նամակ գրէ քեզ եւ իմացնէ. թէ ես ապահով էի եւ տարակոյս չունէի, որ Գուրգէնի ազնիւ սրտին մէջ սերն անշէջ է Յեղիկի համար, եւ թէ Գուրգէն ու Յեղիկն միացեալ ամուսնութեան կապերով՝ աշխարհիս բոլոր Աշտուններուն եւ Դերենիկներուն կրնային դիմագրեր

— Շատ լաւ եւ իմ սրտես խօսել ես, Խոսրով: Դու հանգչի ուրեմն եւ վաղն առաւօտ կանուխ ճամփայ կ'ելնենք: Այո, եթէ Յեղիկն իմն է, ես կրնամ արհամարիել աշխարհքիս բոլոր զօրութիւնքը, դու չես կարող երեւակայել իմ՝ Ռշտունեաց Ոստանն անցուցած մէկ գիշերս, երբ ութ տարի թափառելէ վերջ իմացայ թէ Յեղիկն ուրիշինն եղել է: Եթէ Արտոս լեռը գլուխս փլեր՝ աւելի գոհ կը լինէի: Ի՛նչ կ'ուզայ մարդկային տկար ձեռքերէն: Ես էլ տկար մարդ էի, աստուծմէ խնդրեցի, որ սիրոյ կուրացեալ չընեմ այնպիսի անարժան գործ մը, որ իմ կեանքիս մէջ խղճմտանքիս վրայ ծանրանայ. կրնայի Մուշեղ շղթայակապ թող տալ քողաց ձեռք, կրնայի այդ գոռոզ Դերենիկը երկու մատով խղդել, կրնայի... բայց ի՛նչ յիմար խօսքեր կընեմ... աստուած իմ չարչարանացս վերջ տուաւ եւ ես ուրախ եմ, որ իմ ամենէն աւելի սիրած բարեկամս ներկա է այս վայրկենիս, որ սրտիս